

ինձ կամրկացի Առաքել վարդապետին, որ այժմ առաջնորդ եմ ի Սեբաստիայ. եւ ես ետու որդեկին իմոյ Եէնիշէճիրցի Աբէլ վարդապետի զծայրագոյն գաւազան այսինքն աստիճան չորեքտասան իշխանութեան. եւ ես Աբէլ վրդպս. որ այժմ ունստեալ կամ ի Գեվոցայ վանս սրբոյն Գէորջայ զորաւվարին, ետու զծայրագոյն քաւազան, սիրելի որդւոյն իմոյ ըստամպօղցի Արապ քեահեա օղլու կոչեցեալ Մեսրոպ վարդապետին, վասն որոյ ետու զչորեկտասան աստիճանն վարդապետութեան, եւ ծայրագոյն գաւազան իշխանութեան, առ ի զչարագործան դատել արդարութեամբ եւ զբարին յորդորել զկեանս հրաւիրմամբ, նոյնպէս եւս ետու հրաման, եւ իշխանութիւն սիրեցեալ որդւոյն իմոյ Աթոռ դնելոյ, Աշակերտ ժողովելոյ, եւս ետու իշխանութիւն գաւազան տալու, եւ ամենայն կարք եւ սահման զոր ինչ գոն ի ծայրագունի տուեալ շնորհեսցի, եւս խալիչայ փռելոյ...

Վկայականներէս կը տեսնուի՝ որ Աբէլ Վ. Եէնիշէճիրցի է, միաբան Սեբաստիոյ Ս. Նշան վանքին. մասնաւոր վարդապետութեան աստիճան ընդունած է իր ուսուցիչ խորբերդցի Թմպիկ մականուանեալ Աստուածատուր Վ.էն, որ Ս. Նշանի Առաջնորդ եւ Սեբաստիոյ Արքեպս.ն է. ծայրագոյն վարդապետութիւնն ընդունած է Սեբաստիոյ Առաջնորդ Արքեպս. Կամրկապցի Առաքել Վ.էն. եւ 1738ին Արքեպիսկոպոս ձեռնադրուած է իբրեւ Առաջնորդ Սեբաստիոյ Գեւոցաւանին Ս. Գէորգ վանաց: Երրորդ վկայագրին մէջ մտադրութեան արժանի է 1741ին գրուած սա խօսքն. «այժմ ունստեալ կամ ի Գեւոցայ վանս սրբոյն Գէորգայ զորավարին»: